ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«-----» ---------- 2010 թվականի N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N1385-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին» N1385-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետում «և / (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով,

2) 27-րդ կետում՝ 4-րդ ենթակետում «7 օրով» բառերը փոխարինել «30 օրով» բառերով,

3) 27-րդ կետը լրացնել 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «հոգեբանական օգնություն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյան

Տեղեկանք հիմնավորում
Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի N1385-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին» N1385-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելը թելադրված է մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձանց ուղղորդումը աջակցության տրամադրումն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությամբ: Այն բխում է ՄԱԿ-ի «Անդրազգային կազմա-կերպված հանցավորության դեմ» կոնվենցիայով և դրան կից 2 կամընտիր արձանագրություններով, Եվրախորհրդի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» կոնվենցիայով ստանձնած ՀՀ պարտավորություններից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի)դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 1598-Ն որոշման պահանջներից: Որոշման նախագծով առաջարկվող փոփոխությունները քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) հարցերով խորհրդի 2009թ.-ի նոյեմբերի 27-ի նիստի ժամանակ և ստացել հավանություն:

Որոշման նախագծի 1.1 կետով առաջարկվող փոփոխությունը նպատակ ունի վերացնելու շարունակ նկատվող տարընթերցումը ՀԿ-ների և որոշ միջազգային կազմակերպությունների կողմից, ինչը բացասական է որակվում Ազգային ուղղորդման կարգը գնահատելիս, և առավել հստակ դարձնել, որ զոհի մասին տեղեկատվությունը ՀԿ-ի կողմից կարող է փոխանցվել կա՛մ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, կա՛մ Ոստիկանություն, ըստ հայեցողության:

Որոշման նախագծի 1.2 կետով առաջարկվող փոփոխությունը նպատակ ունի խուսափել Եվրոպայի խորհրդի կոնվենցիայիով պահանջվող պարտավորություններին համապատասխանության առումով տարաբնույթ մեկնաբանություններից՝ արձանագրելով կոնվենցիայում նշված ժամկետը:

Որոշման նախագծի 1.3 կետով առաջարկվող փոփոխությունը նպատակ ունի համապատասխանեցնելու փաստացի տրամադրվող աջակցության ձևերը Ազգային ուղղորդման կարգով նախատեսվածին: Ըստ 2008-2009թթ.-ին Ազգային ուղղորդման կարգի կիրարկման վերլուծության, թրաֆիկինգի բոլոր զոհերին, հայտնաբերման առաջին իսկ պահից, տրամադրվում է հոգեբանական օգնություն:

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյան